ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2010)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի օգոստոսի 10-ի նիստի «2010 թվականի օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2010 թվականի օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 71

Իրական հատվածի ցուցանիշներ 74

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստող ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 77

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 82

Կենտրոնական բանկի և գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 83

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 95

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 114
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 126
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 128
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 134
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (10.08.2010)

2010 թվականի օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2010 թվականի օգոստոսի 10-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Ա. Չիլինգարյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Նորեկյանը:

Խորհրդի նիստը, որը հաջորդել է դրամավարկային քաղաքականության ծրագրի հրապարակմանը, սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Առկա նոր տեղեկատվության հիման վրա գնահատականներ տրվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ միտումներին: Հիմնական մակրոտնտեսական զարգացումները համահունչ են ծրագրի կանխատեսումներում նախանշված ուղղություններին: Միջազգային ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկման և առանձին ապրանքային շուկաներում (մասնավորապես՝ հացահատիկի) խնդիրների սրման պայմաններում արտաքին հատվածից եկող ազդակները գնաճային են: Տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը, ինչպես նաև ներքին պահանջարկով պայմանավորված գնաճային ճնշումների բացակայությունը շարունակում են մեղմել ներքին գնաճային ճնշումները: Այս հեռանկարում 12-ամսյա գնաճը կվերադառնա նպատակային միջակայք կանխատեսվող մեկ տարվա հորիզոնի վերջում:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2010 թվականի հուլիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.8% գնանկում, որի պարագայում 12-ամսյա ցուցանիշն աճել է նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ 2.0 տոկոսային կետով՝ կազմելով 7.8%: Ընդ որում, հուլիսի գնանկումը զգալիորեն զիջում էր ինչպես սպասվող, այնպես էլ նախորդ տարիների նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշներին, ինչը հիմնականում պայմանավորված էր «Միրգ» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի գների ավելի քիչ նվազմամբ:

Հուլիսին պարենային ապրանքների գները նվազել են 1.5%-ով (նպաստումը գնաճին՝ -0.8 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 0.4%-ով (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.2%-ով (նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ): Արձանագրված գնանկումը հիմնականում պայմանավորվել է «Ձու», «Միրգ», «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Շաքարավազ» ապրանքախմբերի գների նվազմամբ, որոնց ընդհանուր նպաստումը գնանկմանը կազմել է -0.8 տոկոսային կետ:

ՀՆԱ իրական աճը 2010 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 6.7%, որն ապահովվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ՝ գյուղատնտեսության) արձանագրված աճի շնորհիվ: Արդյունաբերության ճյուղում գրանցվել է ավելացված արժեքի 9.7% աճ՝ մեծապես պայմանավորված մետաղական հանքաքարերի արդյունահանման, խմիչքների, շինա-

նյութերի, քիմիական արդյունաբերության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների աճով: Շինարարության ճյուղում ավելացված արժեքի աճը կազմել է 11%, ընդ որում՝ բնակարանաշինության ոլորտում դեռևս շարունակվում է անկումը: Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 5%: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը՝ ավելացված արժեքի անկումը կազմել է 12.8%. բուսաբուծության և անասնապահության ենթաճյուղերում արձանագրվել է համապատասխանաբար 35.2% և 1.9% անկում: Բուսաբուծության արտադրության ծավալների նման անկումն արդյունք է գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմանների: Այս իրավիճակում ներքին շուկայում դրանց պակասը բավարարվել է ներկրված մթերքի հաշվին: Արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշները նույնպես շարունակել են նախորդ ամիսների միտումները. ապրանքների արտահանման աճը կազմել է 55.9%, իսկ ներմուծման աճը՝ 24.4%:

Ներկայացվեցին նաև ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Հուլիսին ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի անփոփոխ մակարդակի պայմաններում ՊՊ առաջնային և երկրորդային շուկաներում արձանագրվել է տոկոսադրույքների որոշակի նվազում. ՊՊ առաջնային շուկայում մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են 1.24 տոկոսային կետով և կազմել 8.35%, իսկ 2-5 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերինը գրեթե չեն փոխվել՝ 12.84%: Ռեպո շուկայում տոկոսադրույքները նվազել են շուրջ 1.35 տոկոսային կետով և կազմել 7.14%:

Հուլիսին դոլարայնացման մակարդակը նվազել է 1.9%-ով՝ պայմանավորված արտարժութային ավանդների 0.1%-ով նվազմամբ (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 0.6%): Դրամային ավանդներն այդ ընթացքում ավելացել են 1.7%-ով: Չնայած դոլարայնացման տեմպերի շարունակական նվազմանը՝ տնտեսության վարկավորման ընդհանուր ծավալում շարունակել են գերակշռել արտարժույթով վարկերը, ինչը տեղի է ունեցել գերազանցապես ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշվի ավելցուկային միջոցների հաշվին:

Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց քննարկումները արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսության արագ վերականգնման շարունակականության պայմաններում ԱՄՀ-ն հուլիսին կրկին վերանայել է 2010-11 թթ. համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումները՝ 2010 թվականի համար վերագնահատելով 4.6%, ինչը շուրջ 1.2 տոկոսային կետով բարձր է նախորդ հինգ տարիների միջին ցուցանիշից: Թերևս հեռանկարում այն վտանգված է՝ կապված ֆինանսական անկայունության հնարավոր ռիսկերի տարածման հետ: Այս իրավիճակում զարգացած երկրները, որտեղ բացակայում են էական գնաճային ճնշումները, շարունակել են պահպանել մեղմ դրամավարկային միջավայրը, իսկ արագ աճող խոշոր զարգացող երկրները, բախվելով ավելացող գնաճի կամ ակտիվների գների ճնշումներին, շարունակել են ընթանալ դրամավարկային պայմանների խստացման ուղղությամբ: Միջազգային ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկման և առանձին ապրանքային շուկաներում խնդիրների սրման պայմաններում արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները ՀՀ համար դարձել են ավելի նշանակալի:

Հարկաբյուջետային հատվածի կողմից ընդլայնող ազդեցության աստիճանական նվազման պայմաններում ներքին գնաճային ճնշումները թուլանում են, միաժամանակ, մասնավոր ծախսումների նվազումը չեզոքացնում է աշխատուժի շուկայի թույլ գնաճային ճնշումները:

Անդրադառնալով գնաճի հետագա զարգացումներին և դրամավարկային քաղաքականության ուղղություններին՝ Խորհուրդը փաստեց, որ արտաքին և ներքին մակրո-

տնտեսական միջավայրի զարգացումները համահունչ են երրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրով նախանշված ուղղություններին: Միջազգային ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկման և առանձին ապրանքային շուկաներին (մասնավորապես՝ ցորենի) ներհատուկ խնդիրների սրման պայմաններում արտաքին գնաճային ճնշումները որոշակիորեն աճում են: Միաժամանակ, ներքին պահանջարկով պայմանավորված գնաճային ճնշումների բացակայության և տարեսկզբին դրամավարկային պայմանների խստացման արդյունքում ներքին գնաճային միջավայրը շարունակում է մեղմվել: Այս պայմաններում սպասվում է, որ դրամավարկային ծրագրին համահունչ, երրորդ եռամսյակում գյուղատնտեսական ապրանքների գների վարքագծով պայմանավորված 12-ամսյա գնաճի արագացումից հետո այն աստիճանաբար կնվազի՝ կանխատեսվող 1 տարվա հորիզոնի վերջում ձևավորվելով նպատակային միջակայքի վերին սահմանին մոտ:

Նկարագրված տնտեսական զարգացումների պայմաններում, հաշվի առնելով դեռևս պահպանվող անորոշությունները՝ կապված վերոնշյալ արտաքին գործոններին ներքին գների արծագանքման, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների գների փոփոխման հետագա ընթացքի հետ, Խորհուրդը նպատակահարմար գտավ դեռևս ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների խստացումից: Միաժամանակ, նախանշված ռիսկերի դրսևորումից կախված, Խորհուրդը չի բացառում հետագայում տոկոսադրույքների ճշգրտումը:

Առաջիկա ժամանակահատվածի համար վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը 7.25% է:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*Հունվար – հունիս*	*2010թ. հունվար – հունիսի իրական աճի ինդեքսը 2009թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)*	*Հունվար – հուլիս*	*2010թ. հունվար – հուլիսի իրական աճի ինդեքսը 2009թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	1331968.3	106.7	1586463.6	104.0
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	109.1	-	109.6
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	1207.3	106.0	1434.0	103.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	370827.4	112.3	434531.2	111.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3205.3	115.0	3789.9	116.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	127998.5	86.9	189782.0	77.0
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	448728.1	100.7	537868.5	100.0
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	171232.4	104.1	225422.3	100.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	361065.7	106.1	431866.5	106.1
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	104462 [2]	101.1	106232 [2]	101.1
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1187.9	-	1190.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	84.6	-	84.6	-
Գործազրկության մակարդակը *(%)*	7.1	-	7.1	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2010 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	101.7	103.8	99.2	103.1
Փետրվար	100.3	99.3	102.8	107.8
Մարտ	100.8	102.8	95.2	100.9
Ապրիլ	101.3	105.1	101.5	100.2
Մայիս	101.0	99.4	101.7	98.4
Հունիս	99.2	97.8	100.1	80.9
Հուլիս	99.2	97.9	100.8	92.9
2010 թ. հունվար – հուլիսը 2009 թ. հունվար – հուլիսի համեմատությամբ	107.4	130.3	101.5	122.5

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2008*	*2009*	*2010*	*2010*	*2010*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.4	1.2	1.7	1.7	7.0
Փետրվար	1.1	-1.8	0.3	2.0	9.4
Մարտ	1.4	1.4	0.8	2.9	8.8
Ապրիլ	1.1	3.2	1.3	4.2	6.8
Մայիս	1.3	1.6	1.0	5.3	6.3
Հունիս	-0.5	-0.3	-0.8	4.5	5.8
Հուլիս	-2.2	-2.7	-0.8	3.7	7.8
Օգոստոս	-0.7	-0.4			
Սեպտեմբեր	0.5	0.7			
Հոկտեմբեր	0.7	0.5			
Նոյեմբեր	0.1	1.2			
Դեկտեմբեր	0.1	2.0			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.2	6.5			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	9.0	3.4			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՄԻՄԲԵՐԸ [1]

Անվանում	*2010 թ. հուլիսը հունիսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [1]
ՍԳԻ	**99.2**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**98.5**	**-0.81**
Բանջարեղեն և կարտոֆիլ	93.3	-0.32
Ձու	88.6	-0.20
Միրգ	94.1	-0.15
Շաքարավազ	95.5	-0.06
Կենդանական և բուսական յուղեր	98.7	-0.05
Ոչ պարենային ապրանքներ	**99.6**	**-0.06**
Կոշկեղեն	98.5	-0.03
Մշակույթի ապրանքներ	98.9	-0.01
Հագուստ և գործվածք	99.8	-0.01
Ծառայություններ	**100.2**	**0.06**
Տրանսպորտի	100.6	0.03
Հանրային սննդի	101.8	0.03
Բուժսպասարկման	100.1	0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2007	2008	2009	2010
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.19	0.40	-0.29	0.48
Փետրվար	-0.07	0.83	-0.53	0.74
Մարտ	-0.06	0.66	1.14	0.82
Ապրիլ	0.31	1.26	1.46	0.70
Մայիս	0.28	0.55	0.41	0.04
Հունիս	-0.16	0.30	0.25	-0.22
Հուլիս	-0.19	0.02	-0.22	-0.42
Օգոստոս	-0.16	0.06	0.37	
Սեպտեմբեր	0.51	0.48	0.72	
Հոկտեմբեր	0.80	0.10	0.48	
Նոյեմբեր	0.85	0.25	0.62	
Դեկտեմբեր	0.30	0.08	0.61	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.97	2.91	4.63	6.20
Փետրվար	2.21	3.77	3.02	7.59
Մարտ	2.07	4.54	3.33	7.14
Ապրիլ	2.05	5.66	3.47	6.35
Մայիս	2.14	5.94	3.37	5.92
Հունիս	2.05	6.47	3.36	5.40
Հուլիս	1.03	6.75	3.20	5.16
Օգոստոս	1.18	6.97	3.52	
Սեպտեմբեր	1.32	6.99	3.71	
Հոկտեմբեր	1.94	6.21	4.16	
Նոյեմբեր	2.45	5.56	4.72	
Դեկտեմբեր	2.70	5.37	5.25	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
2010 թ. հուլիսը 2009 թ. հուլիսի նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**5.16**
Տավարի միս	1.4
Ծառայություններ հիվանդանոցների	0.4
Բենզին	0.3
Կարագ	0.3
Վճարովի բուհ	0.2
Շաքարավազ	0.2
Վարձույթի ծառայություն	0.1
Ծառայություններ ախտորոշման կենտրոնների	0.1
Ծառայություններ միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների	0.1
Ոչխարի միս	0.1
Գունավոր հեռուստացույց	-0.1
Օդային տրանսպորտի ուղեվարձ	-0.1
Ձու	-0.4

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

[2] Տվյալները վերանայվել են ԱՎԾ կողմից:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2010 թ. հունվար - հունիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2010 թ. հունվար – հունիսը 2009 թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)*	*2010 թ. հունվար - հուլիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2010 թ. հունվար – հուլիսը 2009 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	442.8	155.9	512.7	143.3
Ներմուծում *(ՍԻՖ)*	1724.0	124.4	2036.1	122.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1281.2	116.3	1523.4	117.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Հունվար – հուլիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	461428	104168	357260	949974	190074	759899
ԱՄՆ	61471	57929	3542	115233	113509	1724
Ուկրաինա	12161	7737	4424	22597	14702	7895
Ղազախստան	11711	1123	10588	22531	2111	20419
Գերմանիա	11629	12338	-709	21366	21193	173
Իսպանիա	4948	3651	1297	9292	8462	830
Ֆրանսիա	6507	8753	-2246	12783	14825	-2042
ԱՄԱ	9941	41521	-31580	15702	74197	-58495
Չինաստան	756	27659	-26904	1411	62428	-61017
Թուրքիա	1974	20363	-18388	3579	40176	-36597
Այլ երկրներ	271819	82564	189255	401210	210692	190517
Ընդամենը	**854346**	**367807**	**486540**	**1575678**	**752370**	**823308**

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2010 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	113111	11595	101516	515796	80932	434864
ԱՄՆ	9356	8535	822	71203	58507	12696
Ուկրաինա	2254	1534	720	10964	13070	-2106
Ղազախստան	2346	765	1582	10034	1971	8063
Գերմանիա	1704	3197	-1493	11809	12485	-676
Իսպանիա	967	1424	-457	4440	6133	-1693
Ֆրանսիա	1610	2618	-1007	9003	7248	1755
ԱՄԱ	4502	3999	503	14204	29145	-14941
Չինաստան	212	5517	-5306	1053	41126	-40072
Թուրքիա	208	4030	-3822	1336	20961	-19624
Այլ երկրներ	23809	25656	-1847	127102	108967	18135
Ընդամենը	**160079**	**68868**	**91211**	**776945**	**380544**	**396400**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2009 թվական					
	Հունվար – հուլիս			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	444404	50708	393695	904011	99524	804487
ԱՄՆ	31331	12413	18918	59288	23332	35956
Ուկրաինա	12075	5679	6395	22418	10401	12017
Ղազախստան	8722	478	8244	17517	954	16563
Գերմանիա	6161	2123	4038	11178	4276	6902
Իսպանիա	3572	974	2598	6839	1893	4946
Ֆրանսիա	3555	1618	1937	7194	2849	4345
ԱՄԱ	3537	2918	619	4769	7704	-2935
Չինաստան	338	2731	-2393	554	5789	-5235
Թուրքիա	1213	2704	-1491	1953	6005	-4052
Այլ երկրներ	46633	15291	31342	88398	32155	56243
Ընդամենը	561540	97637	463903	1124119	194884	929235

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2010 թվական					
	Հուլիս			Հունվար – հուլիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	107662	9752	97910	493803	59228	434575
ԱՄՆ	4989	2181	2808	35794	13712	22082
Ուկրաինա	2242	1103	1138	10671	8120	2551
Ղազախստան	2257	48	2209	9202	441	8761
Գերմանիա	768	524	245	6241	3398	2843
Իսպանիա	921	224	697	3816	1118	2698
Ֆրանսիա	765	306	460	5481	1888	3593
ԱՄԱ	219	545	-326	1699	4060	-2361
Չինաստան	88	641	-553	340	3167	-2827
Թուրքիա	76	874	-799	573	3754	-3180
Այլ երկրներ	8470	3411	5059	50380	20318	30062
Ընդամենը	128456	19608	108848	618000	119203	498797





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ[1,2]

2009	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	156.9	159.4	133.3	132.4	129.9	128.7	126.3	122.6	119.3	115.5	115.4	121.2
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	277.2	288.2	239.2	231.2	224.1	223.6	224.8	219.6	212.9	206.0	203.9	210.9
2010	**Հ**	**Փ**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ[3]**	**Հ[3]**	**Հ[3]**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.2	137.88	135.54					
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.7	223.6	234.96	233.12					

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:

[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000 թվականը = 100):

[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Ցուցանիշներ	2009	2010						
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [4]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**2003.7**	**1938.4**	**1848.6**	**1911.3**	**1887.4**	**1783.5**	**1780.0**	**1831.2**
Համախառն միջազգային պահուստներ	**2003.7**	**1938.4**	**1848.6**	**1911.3**	**1887.4**	**1783.5**	**1780.0**	**1831.2**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	124.7	123.6	120.2	118.3	25.6	20.3	43.5	44.6
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1879.0	1814.8	1728.4	1792.9	1861.8	1763.2	1736.5	1786.6

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2009	2010						
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [3]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**639.9**	**633.7**	**624.0**	**654.5**	**647.1**	**627.6**	**650.8**	**669.7**
ԱՄՀ վարկ	426.5	423.1	416.6	448.7	442.4	429.1	452.8	465.4
ՀՓԻ տեղաբաշխում	138.0	136.9	134.9	133.6	133.0	130.1	130.2	133.7
Այլ վարկեր	74.9	73.5	72.3	71.8	71.4	67.9	67.4	70.3
Այլ պարտավորություններ	0.5	0.3	0.3	0.3	0.3	0.5	0.4	0.4

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջին/ժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարության հաշիվներ և ավանդներ	կենտրոնական կառավարության հաշիվներ	ՕՀԳ-երի միջոցներ դրամով	ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2009									
Դեկտեմբեր[1]	0	25937	25937	177195	652	0	574	178420	**-152483**
2010									
Հունվար	0	25549	25549	198325	649	0	572	199546	**-173996**
Փետրվար	0	23795	23795	184299	667	0	584	185550	**-161755**
Մարտ	0	22779	22779	176030	692	0	568	177290	**-154511**
Ապրիլ	0	21760	21760	175228	665	0	546	176439	**-154679**
Մայիս	0	18505	18505	170808	662	0	538	172007	**-153503**
Հունիս	0	18577	18577	163025	642	0	521	164188	**-145611**
Հուլիս	0	19943	19943	169932	648	0	525	171106	**-151162**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (դրամով մլն ՀՀ դր.)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազայի մուլտիպլիկ [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2009										
Դեկտեմբեր	511678	282441	104354	386795	64082	450878	364113	814990	1.59	1.24
2010										
Հունվար	458054	252619	97378	349997	62707	412704	367122	779825	1.70	1.31
Փետրվար	446783	254158	103782	357940	60325	418265	380792	799057	1.79	1.33
Մարտ	464990	247353	92921	340274	60628	400901	411373	812274	1.75	1.30
Ապրիլ	471972	252525	94302	346827	62266	409092	387183	796275	1.69	1.27
Մայիս	444244	255044	99670	354714	61501	416215	363890	780105	1.76	1.29
Հունիս	434539	265110	101432	366542	63548	430090	356546	786636	1.81	1.27
Հուլիս	435272	275143	105104	380247	65132	445379	362021	807400	1.85	1.29

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
540000
480000
420000
360000
300000
240000
180000
120000
60000
0
07
08
09
10
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
900000
800000
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
07
08
09
10
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
04
05
06
07
08
09
10


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
04
05
06
07
08
09
10


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2009					
Հունվար	403261	279810	374226	474896	661678
Փետրվար	406869	240889	323810	388530	675911
Մարտ	407617	229279	317381	378190	659885
Ապրիլ	403494	232763	313154	382608	667266
Մայիս	421632	240335	327640	389929	686030
Հունիս	423004	243543	336745	395773	687843
Հուլիս	435022	249135	325469	415138	727340
Օգոստոս	435016	252039	337479	416016	742734
Սեպտեմբեր	449570	250250	348546	415398	754073
Հոկտեմբեր	452201	253661	355691	417574	774290
Նոյեմբեր	454839	254966	354346	416117	753118
Դեկտեմբեր	456478	256846	358071	419320	771048
2010					
Հունվար	462011	257280	360176	426814	787844
Փետրվար	461376	261667	366972	432256	825111
Մարտ	473524	288604	389786	459187	847338
Ապրիլ	494590	271881	373242	440300	839265
Մայիս	472480	270011	379601	443854	829544
Հունիս	457578	272331	383992	448891	826273
Հուլիս	441531	266988	388193	437471	807966

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010						
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [3]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***523443***	***504130***	***477634***	***492491***	***488217***	***464155***	***450858***	***454691***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-11765***	***-46076***	***-30850***	***-27500***	***-16245***	***-19911***	***-16319***	***-19419***
Կառավարություն	-152483	-173996	-161755	-154511	-154679	-153503	-145611	-151162
Բանկեր	66184	55338	50253	59466	61606	59195	55382	51822
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	30854	8027	11255	15951	15113	12059	7042	6038
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	0	0	0	-1500	-11803
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	-3757	-3772	-3786	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	74534	72583	80652	67545	76827	74397	73909	79922
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***511678***	***458054***	***446783***	***464990***	***471972***	***444244***	***434539***	***435272***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	320670	283193	283304	276380	280031	284727	295551	307859
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	40450	29823	27460	27442	38059	34478	39355	33647
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	148673	143458	131985	157353	149651	121272	97108	90922
Այլ հաշիվներ	1885	1580	4033	3815	4231	3767	2525	2843
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	1846	1564	4033	3735	4160	3681	2475	2800
Այլ հաշիվներ (արտարժույթով)	40	16	0	80	71	87	50	44
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-19313***	***-26497***	***14857***	***-4274***	***-24062***	***-13298***	***3833***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34311***	***15225***	***3350***	***11255***	***-3666***	***3592***	***-3100***
Կառավարություն	-	-21513	12241	7244	-167	1176	7892	-5551
Բանկեր	-	-10847	-5085	9213	2140	-2411	-3812	-3561
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-22827	3228	4696	-838	-3054	-5017	-1004
ավանդներ (-)	-	0	0	0	0	0	1500	10303
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	-1951	8069	-13107	9282	-2430	-488	6012
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-53624***	***-11271***	***18207***	***6982***	***-27727***	***-9706***	***733***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-37477	112	-6924	3650	4697	10823	12309
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-10627	-2363	-19	10617	-3581	4876	-5708
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-5215	-11473	25368	-7702	-28380	-24163	-6186
Այլ հաշիվներ	-	-305	2453	-218	415	-463	-1243	318
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-281	2469	-298	425	-479	-1206	325
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-24	-16	80	-9	16	-37	-7
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-3.7***	***-5.3***	***3.1***	***-0.9***	***-4.9***	***-2.9***	***0.9***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-291.6***	***33.0***	***10.9***	***40.9***	***-22.6***	***18.0***	***-19.0***
Կառավարություն	-	-14.1	7.0	4.5	-0.1	0.8	5.1	-3.8
Բանկեր	-	-16.4	-9.2	18.3	3.6	-3.9	-6.4	-6.4
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	-2.6	11.1	-16.3	13.7	-3.2	-0.7	8.1
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-10.5***	***-2.5***	***4.1***	***1.5***	***-5.9***	***-2.2***	***0.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-11.7	0.0	-2.4	1.3	1.7	3.8	4.2
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-26.3	-7.9	-0.1	38.7	-9.4	14.1	-14.5
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-3.5	-8.0	19.2	-4.9	-19.0	-19.9	-6.4
Այլ հաշիվներ	-	-16.2	155.2	-5.4	10.9	-11.0	-33.0	12.6

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-136286**	**-116532**	**-100003**	**-122428**	**-125928**	**-123161**	**-129730**	**-135039**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	156420	157625	168963	173444	148198	152924	138869	146351
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-283004	-264240	-259830	-286722	-265025	-267171	-259796	-272013
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-9703	-9917	-9136	-9150	-9101	-8915	-8803	-9377
ԶՆԱ	**675748**	**651114**	**650750**	**696044**	**677814**	**654407**	**657480**	**672925**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	27146	19783	12951	9457	-1973	1434	3126	11705
Պահանջներ Կառավարության նկատմամբ	95321	91790	91135	92659	87773	91458	93851	101313
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-68175	-72007	-78184	-83202	-89746	-90023	-90726	-89608
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	152788	139492	134728	151827	152938	125742	111246	105266
Պահանջներ ԿԲ նկատմամբ	230754	207036	191912	213667	215023	185292	168284	168981
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-77966	-67544	-57184	-61840	-62085	-59550	-57038	-63715
Տնտեսություն	727415	716564	733221	770772	760047	769727	784645	796489
Ջեռնարկություններ	388735	383327	392583	418712	407655	416313	427749	433588
Դրամով	125398	125798	125983	131391	128454	129953	129346	126368
Արտարժույթով	261594	255971	265142	285959	277608	284751	296787	305634
Արժեթղթեր	1744	1558	1458	1362	1593	1609	1615	1587
Տնային տնտեսություններ	312786	309354	315267	327308	328687	330946	333003	338294
Դրամով	214240	211820	213636	219041	220588	221306	219424	218414
Արտարժույթով	98546	97535	101631	108267	108099	109640	113579	119880
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	10637	10216	10403	10756	10318	9729	9575	10234
Դրամով	832	453	446	315	311	208	209	199
Արտարժույթով	9805	9763	9957	10441	10007	9521	9366	10035
Այլ ֆինանսական կազմակերպություններ	15257	13666	14968	13996	13388	12739	14318	14372
Դրամով	14002	12213	13758	12664	12212	11566	13096	12998
Արտարժույթով	1254	1453	1210	1331	1176	1173	1222	1374
Զուտ այլ ակտիվներ	-231601	-224725	-230150	-236012	-233198	-242496	-241536	-240535
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	23796	23629	23590	23665	23285	23294	23548	23136
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	425	1445	1486	2602	3007	5616	7082	9596
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-43	-1069	-1092	-2233	-2571	-5311	-6767	-9218
Ներդրումներ փայաբաժիններում	4104	4064	4101	2100	2135	2141	2175	2165
Միջբանկային պահանջներ	25093	30300	27527	25126	21870	22706	22961	27044
Այլ ակտիվներ	127662	137596	152282	145121	144978	145964	161161	158181
Միջբանկային պարտավորություններ (-)	-24589	-29638	-27134	-24556	-21478	-22148	-21396	-26337
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-7089	-6032	-7722	-8500	-9786	-9667	-9065	-9193
Կապիտալ հաշիվներ (-)	-279476	-276234	-279871	-286580	-286674	-288286	-294997	-297605
Այլ պարտավորություններ (-)	-101484	-108785	-123316	-112756	-107966	-116806	-126239	-118302
ԱՎԱՆԴՆԵՐ	**539462**	**534582**	**550747**	**573616**	**551886**	**531246**	**527750**	**537885**
Դրամով ավանդներ	168876	160436	161986	153650	156079	159735	163405	167904
Ցպահանջ ավանդներ	104399	97698	101977	93547	94806	100439	101936	105527
Ժամկետային ավանդներ	64477	62738	60009	60103	61273	59296	61469	62377
Արտարժույթով ավանդներ	370586	374147	388761	419966	395807	371511	364346	369981
Ցպահանջ ավանդներ	115095	115472	122378	140739	115255	102743	103261	111555
Ժամկետային ավանդներ	255491	258675	266383	279227	280552	268769	261085	258427

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-30647**	**-30870**	**-31719**	**-33476**	**-34254**	**-33289**	**-33070**	**-32645**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	777	784	777	1001	744	569	520	562
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-27533	-27693	-27966	-29816	-29032	-27901	-27599	-26890
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-3891	-3962	-4530	-4662	-5966	-5957	-5991	-6317
ԶՆԱ	**38742**	**39139**	**40836**	**42868**	**44017**	**43621**	**43990**	**43802**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-1012	-490	-824	-1628	-2952	-3101	-3057	-3925
Պահանջներ Կառավարության նկատմամբ	2135	2676	2883	2621	2274	2279	2315	1661
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-3147	-3166	-3707	-4249	-5225	-5381	-5372	-5587
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	14360	15015	16714	20216	21491	21044	21416	22546
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	18807	19467	21490	25142	25934	24930	25193	25774
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ (-)	-4448	-4453	-4775	-4926	-4443	-3887	-3777	-3228
Տնտեսություն	50394	49575	50356	53015	53896	54753	54897	54645
Ձեռնարկություններ	16846	16551	16211	17340	17935	18124	17965	17531
Դրամով	5533	5504	5408	5471	5622	5953	6495	6710
Արտարժույթով	11313	11047	10803	11869	12314	12170	11470	10821
Արժեթղթեր	0	0	0	0	0	0	0	0
Տնային տնտեսություններ	33344	32828	33947	35475	35769	36414	36719	36904
Դրամով	21442	21620	22726	23470	23926	24709	25004	25005
Արտարժույթով	11901	11208	11221	12005	11843	11705	11715	11898
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	185	177	178	181	173	198	191	188
Դրամով	41	41	41	40	39	69	68	67
Արտարժույթով	143	136	138	141	134	129	123	121
Այլ ֆինանսական կազմակերպություններ	20	19	19	19	18	17	22	22
Դրամով	16	15	15	15	14	14	14	13
Արտարժույթով	4	4	4	4	4	3	9	9
Զուտ այլ ակտիվներ	-25000	-24961	-25410	-28736	-28418	-29074	-29266	-29464
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	22	24	19	12	14	14	18	14
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0	0	0	0
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ դրամ դրամարկղում	233	309	160	140	98	136	115	107
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678	1678	1678	1678	1678	1678	1678
Պահանջներ վարկային կազմ-ների նկատմամբ	525	556	673	824	925	1095	1124	1175
Այլ ակտիվներ	2621	2883	3111	2719	2563	2735	2759	3135
Պարտավորություններ վարկային կազմ-ների նկատմամբ (-)	-525	-556	-673	-824	-921	-1085	-1124	-1175
Թողարկված պարտատոմսեր (-)	-158	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ (-)	-26287	-26425	-26723	-29322	-29487	-30172	-30424	-30866
Այլ պարտավորություններ (-)	-3110	-3431	-3655	-3964	-3288	-3476	-3412	-3532
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**8095**	**8269**	**9116**	**9392**	**9763**	**10332**	**10920**	**11157**
Դրամով փոխառություններ	4773	4931	5508	5692	6145	6746	7294	7351
Ցպահանջ փոխառություններ	47	49	44	44	49	54	60	46
Ժամկետային փոխառություններ	4726	4883	5463	5648	6096	6692	7233	7305
Արտարժույթով փոխառություններ	3322	3338	3608	3700	3619	3586	3626	3807
Ցպահանջ փոխառություններ	76	75	77	80	79	77	83	84
Ժամկետային փոխառություններ	3246	3262	3532	3620	3540	3509	3543	3723

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010						
	Դ[6]	Հ	Փ	Մ[6]	Ա	Մ	Հ[7]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***356510***	***356728***	***345911***	***336587***	***328035***	***307705***	***288057***	***287006***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***458481***	***423097***	***453146***	***475687***	***468241***	***472400***	***498579***	***520394***
Կառավարություն	-126349	-154703	-149628	-146682	-159604	-155170	-145542	-143382
Տնտեսություն	774227	762526	779660	819857	810507	821596	836804	849000
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	405581	399878	408794	436052	425591	434436	445713	451119
որից՝ կուտակված տոկոսներ	4295	4434	4534	5094	5006	5561	5674	5672
Տնային տնտեսություններ	345655	341677	348684	362246	363792	366808	369236	374743
որից՝ կուտակված տոկոսներ	4909	5394	5405	5989	5900	6195	5981	6237
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	10822	10393	10582	10937	10491	9927	9766	10423
որից՝ կուտակված տոկոսներ	31	31	29	33	31	29	27	30
Այլ ֆինանսական կազմակերպություններ	12169	10578	11600	10622	10633	10424	12088	12715
որից՝ կուտակված տոկոսներ	82	35	38	36	51	57	53	35
Զուտ այլ ակտիվներ	-189397	-184726	-176886	-197488	-182663	-194027	-192683	-185223
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***450878***	***412704***	***418265***	***400901***	***409092***	***416215***	***430090***	***445379***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***814990***	***779825***	***799057***	***812274***	***796275***	***780105***	***786636***	***807400***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	282441	252619	254158	247353	252525	255044	265110	275143
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով [5]	104354	97378	103782	92921	94302	99670	101432	105104
որից՝ կուտակված տոկոսներ	64	78	87	51	61	93	54	69
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	64082	62707	60325	60628	62266	61501	63548	65132
որից՝ կուտակված տոկոսներ	1382	1385	1336	1434	1474	1579	1607	1648
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	364113	367122	380792	411373	387183	363890	356546	362021
Ցպահանջ [5]	113991	113680	120064	138208	113534	101446	102098	109276
որից՝ կուտակված տոկոսներ	19	24	34	19	21	37	13	23
Ժամկետային	250122	253442	260728	273164	273649	262444	254448	252745
որից՝ կուտակված տոկոսներ	4074	4414	3639	3571	3693	3896	3836	3940
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***219***	***-10817***	***-9324***	***-8552***	***-20329***	***-19648***	***-1051***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-35384***	***30049***	***22541***	***-7446***	***4159***	***26179***	***21816***
Կառավարություն	-	-28354	5075	2946	-12922	4434	9628	2160
Տնտեսություն	-	-11701	17133	40197	-9350	11089	15208	12196
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	-5703	8916	27258	-10461	8846	11277	5406
որից՝ կուտակված տոկոսներ	-	140	99	560	-88	555	113	-2
Տնային տնտեսություններ	-	-3978	7007	13562	1547	3016	2428	5507
որից՝ կուտակված տոկոսներ	-	485	11	584	-89	295	-214	256
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-428	188	355	-446	-564	-162	657
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	-2	4	-2	-2	-2	3
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-1591	1022	-978	11	-208	1664	626
որից՝ կուտակված տոկոսներ	-	-47	3	-2	15	6	-4	-18
Զուտ այլ ակտիվներ	-	4671	7841	-20602	14825	-11364	1344	7460
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-38174***	***5561***	***-17364***	***8191***	***7123***	***13875***	***15290***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-35165***	***19232***	***13217***	***-15998***	***-16171***	***6531***	***20764***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-29822	1539	-6805	5172	2519	10066	10033
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-6977	6404	-10861	1381	5368	1762	3672
որից՝ կուտակված տոկոսներ	-	15	9	-36	10	32	-39	15
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-1376	-2382	303	1638	-765	2047	1584
որից՝ կուտակված տոկոսներ	-	3	-50	98	41	105	27	42
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	3009	13670	30581	-24189	-23293	-7343	5475
Ցպահանջ	-	-311	6384	18144	-24674	-12088	653	7177
որից՝ կուտակված տոկոսներ	-	5	10	-15	2	16	-24	10
Ժամկետային	-	3320	7286	12436	485	-11205	-7996	-1702
որից՝ կուտակված տոկոսներ	-	341	-776	-68	123	202	-60	105

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)								
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***0.1***	***-3.0***	***-2.7***	***-2.5***	***-6.2***	***-6.4***	***-0.4***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-7.7***	***7.1***	***5.0***	***-1.6***	***0.9***	***5.5***	***4.4***
Կառավարություն	-	-22.4	3.3	2.0	-8.8	2.8	6.2	1.5
Տնտեսություն	-	-1.5	2.2	5.2	-1.1	1.4	1.9	1.5
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	-1.4	2.2	6.7	-2.4	2.1	2.6	1.2
Տնային տնտեսություններ	-	-1.2	2.1	3.9	0.4	0.8	0.7	1.5
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-4.0	1.8	3.4	-4.1	-5.4	-1.6	6.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-13.1	9.7	-8.4	0.1	-2.0	16.0	5.2
Զուտ այլ ակտիվներ	-	2.5	4.2	-11.6	7.5	-6.2	0.7	3.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-8.5***	***1.3***	***-4.2***	***2.0***	***1.7***	***3.3***	***3.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-4.3***	***2.5***	***1.7***	***-2.0***	***-2.0***	***0.8***	***2.6***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-10.6	0.6	-2.7	2.1	1.0	3.9	3.8
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-6.7	6.6	-10.5	1.5	5.7	1.8	3.6
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-2.1	-3.8	0.5	2.7	-1.2	3.3	2.5
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	0.8	3.7	8.0	-5.9	-6.0	-2.0	1.5
Ցպահանջ	-	-0.3	5.6	15.1	-17.9	-10.6	0.6	7.0
Ժամկետային	-	1.3	2.9	4.8	0.2	-4.1	-3.0	-0.7

[1] Ընդգրկված են ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:

[2] ԶԱՍ-ն իրենից ներկայացնում է փոխարկելի արտարժույթով ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: Կենտրոնական բանկի ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 385 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱՍ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները:

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները, արտարժութային ավանդներն ու փոխառությունները:

[5] Ներառյալ հաշիվները:

[6] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[7] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2009	2010						
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ
ԶԱԱ	**671**	**540**	**547**	**265**	**275**	**264**	**243**	**253**
Արտաքին ակտիվներ արտարժույթով	685	555	558	278	289	276	257	268
Արտաքին պարտավորություններ արտարժույթով (-)	-2	-2	-2	-4	-5	-3	-4	-3
Արտաքին պարտավորություններ դրամով (-)	-12	-13	-8	-9	-9	-10	-10	-11
